

Չեռ մէկ ձիու քեամկը վերայ կտայ, կըսի.

— Գիւ ըծը յիփ կը խոսոցնիս Գաւթըն.

Կըսի. — Վազը, էսա գեալս.

Կըսի. — Իս, վազը էսա գեալս իս Գաւթը ինչին խոսնիմ.
նաչին խոսնիմ, թէ ջանդակին խոսնիմ:

Կերթայ մըկէլ ձիու մօտ, կըսի. — Ըծը յիփ կը խոսոցնիս
Գաւթըն: Կըսի. — Վազը, կէս օրին:

— Կէս օրին իս Գաւթը նաչին խոսնիմ, թէ լէշին խոսնիմ:

Կերթայ մըկէլ ձիուն կը խարցու.

— Գիւ յիփ տը խոսոցուցիս ըծը Գաւթըն:

Էսաց. — Արիւ առնիլունս

Էսաց — Արիւ առնիլուն իս Գաւթը ինչին խոսնիմ:

— Գնաց մըկէլ ձիուն մօտ, էսաց.

— Գիւ ըծը յիփ խոսոցըցիս Գաւթըն.

— Աչք խփիս, բանաս, քի կը մօտըցըցիմ Գաւթըն:

192. Յեօվան ձիու գլեօխ պագնից, ձին խոսնից, թուաւ
քեամակ, քշից:

Ձին էսաց. — Յեօվան, քիւ աչքիւ խփիլ: Խփից:

Մըկէլ էսաց. — Յեօվան, քիւ աչքիւ բայ: Բացից:

Հալա մութ դշիր էր:

193, Ղալապալ¹ ընկիր ասկեարը մէջ, ձէնքաիւ յըմեն
տեղ կերթայ: Կնունց ձէնքաիւրուց Յեօվան վախեցաւ, էլ չը
կշիւիցաւ քշիր զձին, էրթէր ասկեարը մէջ:

Ձիու վերեւն Յեօվան բեօուաց.

— Գաւթ, Գաւթ, էսաց, էսա խաչ պատարասաին, վե-
րայ իմ աջ թիվին. վրէ՛ շըշըռուիր իս:

194. Յեօվանի ձէն էլ շատ ի. շատ ձէն կայ վերայ, վուր
շատ դատը անդէն բեօուաց, Գաւթ լսաւ:

Գաւթ վախեցաւ. չէ՛ վուր խաչը անուն ասուց:

Նուրէն Գաւթը մըտք ընկեաւ, էսաց. — Կոս Յեօվանի
ձէն ի. պա իս մօուցիր իմ:

Կանչից. — Եա Մարութայ բանձը Ասպարածին, խաչ պատ-
րասաին, վար իմ աջ թիվին:

Գաւթ զթիվքիւ սկուն թափ աալիւ պաշտան զէնձլքիւ
կառտուան:

Յընտե, վուր զնձլքիւ կառտուան, ձին էլ խնդացաւ:

195. Մէկ մարդ էլ, եօթ տղայ կէր էնու. Մէլըք ըզեօթ
աղէն էլ զեօուովէն բիւրի էր կուի:

Ընտե, էդա եօթ աղի խէր, յիւր աղէք շատ կուզէր,

1 Թրք.— Խառնաշփոթութիւն, աղմուկ: